


Английский

3389

Учебник
и практика
сострояния



Учп-Книжка постро
1884.

Տաղավարութիւն և պարագաներ առ Ա. Կարենս.

97.

Ա. Կարենս

ԱՅԲԵՆԱՐԻՆ

ԵՎ Ա. Վ. Զ. Ե. Խ.

Ը Ն Թ Ե Ր Ց Ա Ր Ա Ն


ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՈՒ

ՆԱԽԻԶԵՒՄՆԻ ԵՒ ՊԵՍԱՐԱՊԻՈՅ ՎԻՇՎԻՆ

ՀԱՅ ԳՎԱՐՈՑՆԵՐՈՒԽ ՀԱՄԱՐ

ՋՈՐՋԻ

Յ. Գ. Ե. Ա Տ Ե Ս Ե Ր



ՆԱՐ ՆԱԽԻԶԵՒՄՆ

Տպարտու Ակրոգրելի Յարութիւննեան

1884.

491.99-8
-4-21

2002

2010

917.

- 81

Carin
1912

491.99-8

4-21

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

ԵՒ ՇՈՒՐԱՐԿԻ

Ը Ն Թ Ե Ր Ց Ա Ր Ա Ն

ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՈՒԻՒ.

ՆԱԽԻԳԵՒԱՆԻ ԵՒ ՊԵՍԱՐԱՓԻՈՅ ՎԻՃԱԿԻՆ

ՀԱՅ ԴՊՐՈՑԵՍԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ.

Յ Օ Ր Ի Ե Յ Յ Յ Ֆ Ե Լ Ա Տ Ե Ը



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԿՈՐ ԿԱՌԻՎ ԵՒ ՇՈՒՐԱՐԱՆ

ՏՊԱՐԱՆ ՍԵՐՈՎՔԻ ՅՈՐՈՒԹԻՒՆԵԱՆ

1884.

ՕԵՈՒՅԱԲԱՆ

Խորիմու և Կախիջևանի վիճակին հայ գպրոցներուն
մէջ հայերէն լեզուի յարմարաւոր Ալյբենարանի և Շն-
թեղաբանի հարկաւորութիւնը տեսնելով, ձեռք զարկի յօ-
րինելու առաջեկայ գասադիլքս, հետևելով արդի երևելի
մանկավարժներու ուսումնասիրած մեթոդներուն այն բա-
րեմասնութեանցը, որ կարեղագոյն և նպատակայարմար
թուեցան ինձ:

Առաջին գիրը որ կարդալ սովորեցան աշակերտը,
պէսք է իսկոյն սովորին և գրել զայն: Ի՞սոյց որովհետեւ
զիր զրելը կարդալէն շատ աւելի գժուար է՝ կեանքին մէջ
գրիչ ամենելին ըռոնողին, հարկ է որ կարդալ սկսելին ա-
ռաջ միայն զրութեամբ պարապին աշակերտը բաւական
ժամանակ: Օրինակի համար կսկսին պնակիաներուն և գրա-
տախտակին վերայ դնել կէտեր այլ և այլ զիրքով, յե-
տոյ քաշել ուղիղ և կոր գծեր՝ նոյնպէս այլ և այլ զիր-
քով, յետոյ գծագրել խաչեր, պատուհաններ, սանդուղք,
դռներ, և այլն. և ապա այբուբենին տարերքը կսովորին:
Ելքոր այս կերպով բաւական կպատրաստուին աշակերտը
զիր զրելու, այն ժամանակը միայն պիտի սկսին կարդալու
կրթութիւնքը, որպէս զի կարդալն ու զրելը միմեանց հետ
զցդ ընթանան:

Կոյն միջոցին ուրիշ կարեղը կրթութիւններ ալ
կան անելու հետզհետէ. աշակերտը պիտի վարժին նա-
խադասութիւններն իրարմէ զատել, յետոյ նախադա-

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 6-го Сентября 1883 г.

50566-սի



36199-66

Ա. Ա. ՄԱՏԻԿԱՅԱ
Ա. Ա. ՄԱՏԻԿԱՅԱ

սութեան բառերն իրարմէ զատել, յետոյ բառերուն վանկերը գտնել, և վերջապէս վանկերուն ձայնաւորները գտնել. այնպէս որ երբոր բաւական վարժուած լինին այբուբենին տարերքը զրելու, պիտի կարենան որ և իցէ նախադասութեան բառերը գտնել հարցումնկով (օրինակի համար սեղանը հիւսը կշնէ փայտէ. ով կշնէ, ի՞նչ կշնէ հիւսը, ի՞նչ բանէ կշնէ), և այն բառերը պիտի նշանակեն հորիզոնական գծիներով

— . բառերուն վանկերը իրարմէ պիտի զատեն ուղղահայեաց գծիներով սե | զա | նը հիւ | սը կը | շե | նէ փայ | տէ. և իւրաքանչեւր բառին ձայնաւորները պիտի ասեն հետագայ կերպով. սեղանը բառը ունի երեք վանկ. ձայնաւորներն են ե, ա, ը. հիւսը բառը ունի երկու վանկ. ձայնաւորներն են իւ, ը. և այլն: Այս ժամանակս միայն կարել է զրերը զրել ու կարդալ տալ:

Որովհետեւ շատ գժուարին բան է համբակաց հասկացնել բաղաձայն տառերուն նշանակութիւնն ու հնչումը, նախ և առաջ պէտք է զրել ու կարդալ սովորեցնել միայն ձայնաւորները. առաջին անգամը առնելու է միայն երեք ձայնաւոր ա, է, ի: Երբոր աշակերտը կսովորին այս երեք ձայնաւորներս զրել ու կարդալ (թէ ձեռագիր և թէ տպագրեալ), իւրաքանչեւր հետեւեալ գասին նախընթաց զրերու վերայ աւելացնելու է միայն մէկմէկ զիր, և ոչ աւելի միանգամայն:

Այսուհետեւ կուգայ բաղաձայններու գժուարին ուսումը: Բաղաձայնները սովորեցնելու համար առաջին անգամն առի երկու հատ զ, ս, որպէս զի հնչունքներն իրարու

հետ բաղդատութիւնքը լաւ ըմբռնութիւն. և իւրաքանչեւր հետեւեալ գասին նախընթաց գրերու վերայ աւելցուցի գարճեալ միայն մէկ զիր, և ոչ աւելի: Այդ երկու բաղաձայններով և բոլոր ձայնաւորներով կարծ կարծ բառեր զրած եմ. բառերէն յետոյ ալ դրած եմ մէկ բանի նախադասութիւններ :

Առաջին երկու բաղաձայնները տեսած օրէն աշակերտք իւրաքանչեւր վանկին բաղաձայններն ալ ցոյց պիտի տան հետագայ կերպով. ասեղ բառը ունի երկու վանկ, ա, սեղ. առաջին վանկին ձայնաւորն է ա. բաղաձայն չունի. Երկրորդ վանկին ձայնաւորն է ե. նախադաս բաղաձայնն է ս, և յետագաս բաղաձայնն է դ: Ոսկի բառը ունի երկու վանկ, ոս, կի. առաջին վանկին ձայնաւորն է ո. յետագաս բաղաձայնն է ս: Երկրորդ վանկին ձայնաւորն է ի. նախադաս բաղաձայնն է կ: Վարդիսարկ բառը ունի երկու վանկ, զըլ, խարկ. առաջին վանկին ձայնաւորն է ը. նախադաս բաղաձայնն է գ, յետագաս բաղաձայնն է լ: Երկրորդ վանկին ձայնաւորն է ա. նախադաս բաղաձայնն է ս, յետագաս բաղաձայններն են ր, կ:

Բաղաձայններուն, ինչպէս նաև ձայնաւորներուն, ըկ հնչումը պիտի տրուի որբան որ կարելի է, զ, ս, կ, ր, և ոչ անունները զատ, սէ, կին, ըէ, կամ, որ զրեթէ նոյն բանն է բայց աւելի այլանդակ զըլ, սը, կը, ըը, րդ, ըս, ըկ, ըր: Կմանապէս հեղել բնաւ պէտք չէ. վասն զի այնու կընկնիսք հին մեթոդի այլանդակութեանը մէջ: Հասպա կարդալը այսպէս պիտի լինի՝ զոր օրինակ աղբիւր

բառը. նախ առնելու է առաջին գիրը ա, յետոյ միայն մէկմէկ գիր առելայնելով կարգալու է այսպէս. ա, աղ, աղը, աղթիւ, աղթիւր: Այժէ բառն սկսի մէկ բաղաձայնով, հետադայ ձայնաւորն ալ հետն առնել և այնպէս սկսելու է՝ զոր օրինակ բարեկամ՝ բառը. բար, բար, բարե... Իսկ երկու, երեք կամ առելի բաղաձայննելով սկսած բառն սկսելու է երկու բաղաձայններով, մէջը կամ սկիզբը, պէտք եղած տեղը, ը դնելով. ջրեց, ջրը, ջրեց: Պատետ. ըզգ, ըզգե... Տնից. տըն, տընկ... Մոնչել. մըու, մըուըն, մըուընչ...

Այլոր զրերը տեսնելին յետոյ անպատճառ հարկաւար է զրերուն անունները սովորեցնել աշակերտաց. այբ, բնեն, գիմ, դա...

Հարկ չկայ որ աշակերտք ամենայն բառերուն նշանակութիւնը սովորին :

Ի՞նչ որ կկարդան աշակերտք, այն բոլորը, կամ գոնէ մէկ մասը, պիտի զրեն ալ. և ուղղագրութեան ու արտասանութեան մեծ ուշադրութիւն պիտի դարձուի :

Ա երջերը զրուած են մէկ բանի խումբ այնպիսի բառերու, որոց ընթելցումը փոքր ինչ դժուարութիւն կըպատճառէ :

Ո նթերցանութեան հատուածները կարդալ տալին առաջ, ուսուցիչը պիտի պատրաստէ աշակերտները հասկանալու հատուածին մէջի բառերն ու չգիտցած բաները: Եթւ այս պատրաստութիւնս պիտի լինի ոչ այլ ձևով, բայց եթէ կալմէ կալմէ հարցումներ անելով աշակերտաց: Այժէ աշակերտք դժուարութիւն կրեն պատասխանելու,

այն ժամանակ ուսուցիչը ինքն պիտի տայ իւր արած հարցումին պատասխան . և ապա այն պատասխանը կրկնել պիտի տայ աշակերտաց մէջին մէկ քանիսին: Հատուածին բառերն ու իմաստները հասկանալին յետոյ, աշակերտք կկարդան հատուածը:

Հատուածին կարգացումը աւարտելին յետոյ, պատմութիւնը կամ բովանդակութիւնը կապատճուի կարճառու հարցմունքներով ու պատասխաններով: Պատսախանները պիտի լինին ըստ մեծի մասին ամբողջ նախադասութիւններով: Այս կրթութիւնս ալ աւարտելին յետոյ, ուսուցիչը պատմել կուտայ աշակերտաց կարգացուած հատուածին բովանդակութիւնը կամ պատմութիւնը, նաև կտոր կտոր, և ապա ամբողջ:

ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ

Ա Յ Բ Բ Ե Ն Ա Ռ Ա Ն .

ա, է, ի, օ, ու, ը, ո, ե, իւ.



աղ, աս.

աղ, աս, սա, օղ, եղ, ես, իւղ, ուս, աղա,
սսա, աղի, ասի, ասէ, աղու, օղի:

Եղը աղի է: — Աղը աղու է: — Սա
իւղ է: — Ես ասեղ ասի:



աղ, կաղ.

ակ, եկ, կաղ, կաս, սեկ, կէս, կող, իսկ,
եղկ, սոսկ, էակ, ակօս, ուղուկ, աղաղակ:

Ուղեղը կակուղ է: — Աս օղը իսկ ոսկի
է: — Աղէկ սեկը սուղ է:



սահ, սար.

իր, օր, ուր, իւր, սուր, արկ, երկ, որս,
օրօր, ուրուր, երես, երկիր, կորեկ, ողորկ,
սարեակ:

Երէկ երկու ասեղ կորուսի: — **Արուսեակ,**
արի կերակուր կեր ու կար կարէ:



սահ, սան.

օն, ան, նա, նեղ, նոր, կին, անկ, ներկ,
ներս, սունկ, կոկան, կերոն, արիւն, ընկեր,
սենեակ:

Իրեն անունը Սուրէն է: — **Սիսակ ու**
Նունէ սունկ կերան: — **Ոսկանին սեղանը**
նեղ է: — **Ներսէս իննը կաղին ունի:**



աղ, մաղ.

իմ, մի, մաղ, մեր, մուկ, միս, արմ, որմ,
աման, ամէն, ամուր, արմուկ, **Արամ, Մանէ,**
Մարկոս:

Արիւնը կարմիր է: — **Մեղուն մեղը ու**

մոմ կանէ: — **Որմին մէկ կողմը եղեալ-**
կար: — **Անաստններուն մարմինը մերկ է:**



սահ, սալ.

ուլ, լու, իլ, լի, ել, ալ, լուր, կուլ, լեղակ,
լիմոն, լըման, մոլոր, լըսելի, սիրելի, իւղալի:

Լուսինը կըլոր է: — **Լողակները լերկ**
են: — **Մալը ալիւր մաղելու աման է:** —
Մեր ընկերները ելակ ու սալոր կերան:



եղ, տեղ.

ետ, տես, տող, մատ, կուտ, տուն, արտ,
ոստ, սիրտ, կունտ, տիղմ, արօտ, ընտիր,
մատեան, տեղեակ:

Անտոն տասը տարեկան է: — **Ուղտը**
ընտանի անասուն է: — **Աս տետրակը տար**
Ատոմին տուր: — **Տուղտը սիրուն տունկ է:**



աղ, պաղ.

պատ, պէս, պաղ, կաղ, ամպ, ոսպ, պարկ,

կերպ, պարապ, կապիկ, ապրիլ, ապտակ,
կերպաս, պատկեր, Պետրոս:

Լեղակը կապուտ է: — Մուկը պանիր
կըսիրէ: — Պիտի ուտես որ ապրիս: —
Պընակը ապուրի աման է: — Պօղոս, տար
սապոն տուր Մեսրոպին:



ամ, համ.

էհ, հէ, ահ, հա, ոհ, համ, մահ, հին, հոս,
հարս, հարկ, հասկ, նիրհ, տոհմ, մեհեան:

Հերու Հրահատ հաստ սահնակ մը ունէր:
— Իսկուհին հարիւր հատ հուն կըհամրէ: —
Հունտ սերմանելու համար հողը կըհերկեն:



նա, նազ.

եզ, զի, զիլ, զուր, զատ, մեզ, մազ, տիզ,
զարկ, կազմ, զարմ, պարզ, զիստ, զուսպ:

Եզը զօրեղ է ու հեզ: — Պազարին լեզուն
կակազ է: — Ոզնին ու կուզը պարտէզը
մըտան: — Զանազանը զըղեա կուզէ:

կար, կարճ.
ոճ, աճ, կիճ, ճիկ, ճար, կոճ, ճեղ, կինճ,
կարճ, ճարպ, ճանճ, մուրճ, ճրճի, կըճիճ,
ճահիճ:

Կիճը ճերմակ է: — Կոճին ճիւղերը կե-
րերան: — Այճիճը կակուղ մետաղ է: Հա-
ճարին ոճերը կըճօճին: — Երեսուն հատ
կոճ ունիմ:



աղ, շաղ.

էշ, ուշ, շիշ, նուշ, շուն, շեմ, շէն; շերտ,
միշտ, հաշմ, հեշտ, կուշտ, մաշկ, աշուն,
մաշկեակ:

Արշակ շատ մուճակ կըմաշէ: — Կօշիկը
կաշիէ կըկարեն: — Շուշանը ճերմակ է: —
Եղիշէին շապիկը աղտոտ է: — Մանուշակը
անուշ հոտ ունի:



աս, այս.

այ, այտ, այլ, այր, հայ, հայս, պայտ, սայլ,
սայր, կայմ, մայիս, միայն, ունայն:

Ես ունիմ հայր ու մայր : — Այս ոստայնը
լայն է : — Այն տեղը ամայի է : — Այրի
կինը մեզի հայելի պիտի ուղարկէ : — Այսօր
երկայն երկայն սայլեր կային շուկան :

ատ, վատ.

ով, սով, հով, վայ, վատ, վէմ, վէճ, վեր,
վար, վուշ, վարմ, վարկ, վանկ, վաշտ, վերտ :

Վըտակը վըճիտ է : — Վարագը վայրի
անատոն է : — Մովսէսին կովը վըտիտ է : —
Երիվարը վիզը տընկած կըվագէ : — Արսէն
վաղը վարսակ պիտի սերմանէ :

ակ, ծակ.

օծ, ած, խած, ծակ, ծեծ, ծուծ, ծեր, ծով,
կայծ, ործ, կեղծ, գերծ, պիղծ, ծունկ, պիծակ :

Մոծակը արիւն կըծըծէ : — Այս ծովը
ծանծաղ է : — Ծեր այծը ծաղիկներուն ծի-
ղերը կըկըծէ : — Ծերօնը Ծառուկին ծոծ-
րակը կըծեծէ ծանըր կըծիկով :

օղ, քօղ.
քար, տաք, քուն, շուք, ելք, ոտք, քայլ,
մեղք, միտք, քամի, ինքը, երկինք, կուրծք,
պարտք, չնորհք :

Մեր քաղաքը մաքուր է : — Մենք քիմք
ունինք ճաշակելու համար : — Այս կոնքին
երեք րուալի տուխնք : — Քօշը մօրուքը տըն-
կած կըքալէ :

ամ, ժամ.

իժ, ուժ, կուժ, ժամ, ժիր, ժանկ, շարժ,
աժան, օժիտ, ուժեղ, պատիժ, ժանիք, ար-
ժէք, այժըմ, նաժիշտ :

իժը սողուն է : — Ժամը ժամանակի մասն
է : — Այս կովը վատուժ է : — Կուժը հե-
ղուկներու աման է : — Վարժապետը կըժըպտի:

ան, թան.

թի, ութ, թան, թաթ, լաթ, թել, թուզ,
մութ, քիթ, կոթ, մորթ, շանթ, կարթ,
շուրթ, եթէ, թիթեղ :

Արծաթը երկաթէն թանկ է : — Եօթը
թերթ թուղթ պէտք է Նեթումին : — Կաթը
շիթ շիթ կըկաթկըթի անօթէն : — Շատ թըր-
թուր կար վանքին պարտէզր :

աղ, իսաղ.

օխ , ախ , ոխ , վախ , մուխ , խաղ , խոտ , սոխ ,
թուխ , խայտ , լախտ , խօնք , խունկ , խաղմ ,
խրոխտ :

Խակ խաղողին ազոխ կասեն : — Խեղձ
Խոսրովը խիստ վախկոտ է : — Աշխէն , խու-
մաճիկ կը խաղաս հետքս : — Ճաշին կերանք
խաշու , խաշ ու խորոված :

m_2 , ϕm_2 .

ափ, եփ, թեփ, տուփ, փիղ, փակ, փոր, փուշ, փոշի, ափսէ, փիլոն, փեթակ, փետրուար :

Փեղկին փայտը փրտած է. պէտք է փոխել: — Փասեանը փայլուն ու փափուկ փե-

տուրներ ունի: — **Սովորական, փոքը տուրին խուսափություն կակէ:**



Академии
СССР

լու, լուն.
ուռ, եռ, առ, ծառ, թոռ, լուռ, ժայռ,
առիք, աթոռ, ամառ, կեռաս, անտառ, ռե-
հան, ռամիկ, ռոճիկ:

Կառքը առանը քաշել տուր: — Վառվառէ, առ օճառը մառանը տար: — Ճըպուռը ուռի ծառէն հեռու կըճրռճռար: — Փառնակին վերարկուին աստառը պատռած է:



ափ, չափ.

ոչ, չէ, չու, խաչ, շափ, չար, քիչ, չիք,
պոչ, աչք, մինչ, չինչ, շունչ, չուան, ջրնչին:

Այս ի՞նչ կանչ ու ճիչ է : — Այս չամփչը
քիչ մը չոր է : — Չորս փառչ չիրը չըծա-
խես : — Չար Սաթինիկը կանաչ թըռչունը կը-
չարչարէ : — Ոչխարր խոտակեր չորքոտանի է :



այտ, յայտ.

յէ, յետ, յարկ, յայտ, յօնք, յիմար, յատակ, յունիս, յուլիս, յունուար, յեղյեղուկ, անյաղթ, վերնայարկ, Յիսուս, Յակոբ:

Յովսէփ յոպնակ քաշելէն յոգնած է: —
Այս խաչը յիշատակ է ինծի Յուսիկէն: —
Յանկարծ յիսունի չափ յոպոպներ թրոան:



օղ, ցօղ.

ցեց, վեց, ցից, ցեխ, ցօղ, լաց, ցած, ցանց,
ցոլք, քաղց, ցուրտ, քացախ, ցորեկ, վաշոց, ցընցուղ:

Հացը թաց է: — Թառչունները կըտուց
ունին: — Մըշակները ցորեն կըցանեն: —
Յուլ կանցընէին փողոցէն: — Կացինով ու
սըղոցով փայտ կըկըտրեն:



եղ, գեղ.

էգ, մէգ, գամ, գեղ, թագ, գէշ, երգ,
գորգ, գիրք, հոգի, գօտի, գըլուխ, գըլ-
խարկ, որնդունք, օդոստոս:

Գայլը անգութ գազան է: — Տիգրան գը-
նաց ճըրագ վառելու: — Գուրգէնին մազերը
գանգուր են: — Գէորգ, հինգ գըրիչ տուր
Գրիգորին:



աս, դաս.

օդ, դու, դա, դաս, դիր, դուռ, երդ, դորդ,
մարդ, դաշտ, ճիշդ, պինդ, որդի, դըգալ,
դըպրոց :

Վարդը գարնան զարդ է: — Որդը զա-
զիր կենդանի է: — Վարդան, դանակ տուր,
դըդում կըտրեմ: — Սանդուխտ, սանդը առ-
ու տաքդեղ ծեծէ:



ակ, բակ.

բու, բուք, բաց, բեր, բիբ, երբ, որբ, ողբ,
բախտ, բուրդ, սուրբ, ուումբ, բամբակ, աղ-
բիւր, արդեամբք:

սեպտեմբեր, հոկտեմբեր, դեկտեմբեր, երկու-
շաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբ-
թի, ուրբաթ, շաբաթ:

Արէլ թըմբուկ կըզարնէ : — Ռուբէնը իմ
եղբայրս է : — Այս բաժակը շատ բարակ
է : — Բարի ծառը բարի պըտուղ կըբերէ :
ան, ջան .

էջ, աջ, քաջ, ջահ, արջ, մունջ, ջերմ, մէջք,
առաջ, բըջիջ, առողջ, ականջ, աղջիկ, բող-
բոջ, կամուրջ, լանջք, անուրջք :

Մըջիւնը միջատ է : — Աըմբատ, ջրնջոց
բեր : — Ջըրհորէն ջուր քաշէ, Փաջաջ : —
Նարնջին միջուկը ջըրոտ է :



ախ, ձախ .

օձ, ձու, ձի, ձագ, ձեր, իղձ, ինձ, տանձ,
բարձ, ձորձ, ձայն, խուրձ, ձըրի, ատաղձ,
արձակ, պըղինձ, հունձք :

Զըկնորսը ձուկ կըբըռնէ : — Զիւնը ձըմեռը
կըլինի : — Դերձակը հանդերձին օձիքը կը-
կարէ : — Փառանձեմին ձեռքը ձեղունին կը-
հասնի :



նա, նաւ .
իւ, եւ, սեւ, ցաւ, հաւ, թիւ, նաւթ, արեւ,
աւել, թեթեւ, բարեւ, զաւակ, հովիւ, ագ-
ուաւ, աղաւնի, յիրաւի :

Ղեւոնդ, կաւիճ բեր : — Դաւիթը հիւանդ-
է : — Ղեւոն, մէկ գաւաթ ջուր բեր : — Արծիւ-
ները մեծ մեծ թեւեր կունենան :



կայ .

կայ, գայ, տայ, լայ, կապայ, փեսայ, ըն-
ծայ, կաթսայ, երեխայ, ապագայ, քահա-
նայ, փոսուրայ, իմացայ, ուրախացայ :

Ժամացուցի շըղթայ գըտայ : — Արայ իսա-
բերայ տըղայ է : — Ես կերայ գաթայ, սամ-
սայ, հերիսայ ու կաստանայ : — Օտայ, մէկ
ծառայ յուղարկէ շուկայ, որ գընէ բակլայ,
չուխայ և գուլպայ :



բուն, բոյն .
ոյժ, գոյժ, լոյս, գոյն, լոյծ, ծոյլ, փոյթ,
մոյկ, արոյր, զըրոյց, պըտոյտ, պիտոյք, ող-
ջոյն, ընկոյզ, պատրոյգ, հանգոյց :

Պարոյրին քոյրը կոյր է: — Խոյրը գըլխու
ծածկոյթ է: — Պաղած ջուռը սառոյց
կըդառնայ: — Տըղայք, զոյգ զոյգ կանգ-
նեցէք:



Քէֆ, ֆէս, ֆունթ, ֆէնէր, աֆիոն, նու-
նուֆար:



Ա, ա, այբ	Ե, է, ինի	Յ, յ, յի	Շ, տ, տիւն
Բ, բ, բին	Լ, լ, լիւն	Վ, ն, նու	Ծ, ր, րէ
Գ, գ, գիմ	Խ, խ, խէ	Շ, շ, շա	Ց, ց, ցո
Դ, դ, դա	Օ, օ, օս	Ո, ո, ո	Ւ, ւ, ւիւն
Ե, ե, եչ	Ա, ա, ան	Չ, չ, չա	Փ, փ, փիւր
Զ, զ, զա	Շ, շ, շո	Պ, պ, պէ	Վ, ք, քէ.
Է, է, է	Չ, չ, չա	Ջ, ջ, ջէ	Օ, օ, օ
Ը, ը, ըթ	Դ, դ, դա	Ա, ա, աս	Ֆ, ֆ, ֆէ.
Թ, թ, թո	Ռ, ռ, ռէ	Ա, ա, աէ	
Ժ, ժ, ժէ	Մ, մ, մն	Ա, ա, աւ	



Գոյ, խոյ, խմոյ, միոյ, հաճոյ, յետոյ, վերոյ,
պիտոյ, գետոյ, ծառոյ, մարդոյ, երեկոյ,
բարեբարոյ, Ռուսիոյ:



Հա, սա, նա, դա, ահա, ապա, հապա, սոքա,
նոցա, դոքա, սորա, նորա, դորա, սոցա,
նոքա, դոցա, խաղա, կարդա, Ռուսիա:

Ազարիա, գընա ասա կօշկակարին որ հի-
մա թող գայ:



Քո, այո, կեցո, կորո, մատո, ապրեցո, խո-
նարհեցո:



Մարտոյ, բարտոյ, գինտոյ, հոգւոց, որդւոց,
եկեղեցւոյ:

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Աըր-
բոյ. ամէն:



Խոյակ, խոյօղ, ախոյեան, պիտոյից, գոյու-
թին, հոյակապ, հայհոյանք, հաճոյական,
բարոյական, երեկոյեան, նոյեմբեր:



Դգալ, կծիկ, ձմեռ, ձրագ, ջրոտ, լման,
քսակ, տնակ, փշոտ, խմոր, պտուղ, սիալ,
կտուց, թռաւ, գլուխ, զնին, շփոթ:

Հմայեակը հլու տղայ է. խրատ լսել կսիրէ:



ծանր, մեղր, փոքր, մասն, խառն, մանր,
ծաղր, նօսր, համր, կայսր, այժմ, գիրս,
լարդ, պատկերս, տողերդ:



արկդ, աստղ, սերմն, կարծր, սանտր, քաղցր,
բարձր, թանձր, դուստր, սիմինտր, ասրս,
մեղրդ, արկդս, աստղդ, սանտրս, դուստրդ:



թրթուր, կտրել, մտնել, կրծել, թոչուն,
յստակ, դպրոց, թմբուկ, ջրհոր, խնձոր,
մլրատ, դլխարկ, փշրանք, զմրուխտ, հըր-
ճուանք, Տրդատ, Ամբատ:



զնա, սպի, ստակ, ստել, զգեստ սպունդ,
ստուեր, սկիզբն, սպիտակ, շտապիլ, ստեա-
դին, զրօսանք, զգայարանք, շտեմարան,
Ստեփան:

ստրուկ, զկնի, սկսիլ, զկծանք, ստգիւտ,
զՔրիստոս:

անձրև, անցնիլ, ընթրիք, ամպրոպ, գաղտնի,
կանգնիլ, հանգչիլ, սանտրել, թարգման,
մարտկոց, յաղթկու, կարչնեղ, պաշտպան,
ներքնակ, քաղցկեղ, զարթնուլ, հարցփորձ,
անձկալի, պարսկերէն:



ձեռնտու, անսխալ, արմտիք, ոտնհար, վե-
րըստին, պարսպել, կաթնկեր, ճակնդեղ,
կապրցախ, պատշգամ, ապստամբ, մազմզուկ,
փախստական, յափշտակիչ, տամնպատիկ,
հետզհետէ, ակնյայտնի:



խնդրել, կրկնել, ծնծղայ, դստրիկ, կրտսեր,
տրտմիլ, ճնճղուկ, կնդրուկ, ճգրիտ, խըրտ-
միլ, մրջնառիւծ, փրկչական, քրքմաւէտ,
Հնդկաստան:



պղնձի, բռնցի, կտրտել, մոնչել, խլրտիլ,
դժնղակ, ձկնկիթ, շռնչան, մկնդեղ, խխնջել,
շնջել, լարծիլ, ժպրհիլ, զմուսել, ձգոտալ,
Մկրտիչ:



դժպհի, շնջրի, մումուալ, փրցնել, ճռճռալ,
թռթռել, փրփրել, պղպջակ, կնճռել, կրճ-
տել, քրքրել, հտպտիլ, ձգձգել, շփշփել,
ակլուիլ:



երկճղի, ունկնդիր, ընկզմել, մարտնչել, վաղ-
վըռտել, հարսնմատ, երկդրամեան, երեք-
սըրբեան, հանգստարան, խորհրդաւոր, յան-
դգնութիւն, իննաներորդ, իննթվեան, անդըր-
դուելի:



թրթնջուկ, տրտնջել, խղճմտանք, զմրխտեայ,
սրտմտութիւն, փոնդտալ, ճշդրտել, մշտնջե-
նաւոր, քստմնելի, քրթմնջել, խառնչտկել,
ստրկանալ, ստնտու, սպնգատեսիլ, սկզբնական:



հրանշոյլ, արևմտեայք, առուոյտ, ճռուողել,
քազմակնութիւն¹⁾, բազմակնութիւն²⁾, ազնու-
ութիւն, թոյլտուութիւն, թթուութիւն, ծեծ-
կուունք, հրճուումն, հովուուհի, տունջեան³⁾,
տուչութիւն⁴⁾:

1) Ակն բառէն՝ 4 գանկ: 2) Կին բառէն՝ 5 գանկ: 3) Տըւընչեան:
4) Տըւչութիւն:

ՄՐՄՆ ԵՐԿՐՈՐԴԻ

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

1. Տըլլ և Ֆեռան:

Ես տղայ եմ: Ես ունիմ հայր և մայր:
Հայրս ու մայրս իմ ծնողքս են: Ծնողքս
զիս կկերակրեն: Նոքա ինձ կուտան զգեստ
ու կօշիկ: Նոքա ինձ անկողին կուտան պառ-
կելու համար: Իմ ծնողքս զիս կսիրեն: Ես
ալ կսիրեմ իմ ծնողքս:

2. Երբայր և Քոյր.

Ես ունիմ մէկ եղբայր ու մէկ քոյր: Եղ-
բօրս անունն է Արմենակ: Փրոջս անունն է
Շուշանիկ: Եղբայրս ու քոյրս միշտ կխաղան
ինձ հետ: Ես շատ կսիրեմ եղբայրս ու քոյրս:
Շուշանիկը ինձնէ մեծ է: Արմենակը ինձնէ
փոքր է:

3. ԱՌԵՒՐԵՆ և պատ պատ.

Եղբայրը կասէ քրոջը. «Մի' կպչիր իմ հովիս»: Փոյրը կպատասխանէ եղբօրը. «Դու ալ մի' դպչիր իմ խումածիկներուս»: Տղայքը կերթան կնստին մէկմէկ անկիւն. բայց շուտով երկուքն ալ կակաին ձանձրանալ: Ինչո՞ւ:

4. ՄԱՆԿԱԿԱՆ աշխաց.

Տղան կասէ հօրը. «Հայր, ինձ ալ ակնոց գնէ. ես ալ կուզեմ քեզ պէս գիրք կարդալ: — Շատ լաւ, կպատասխանէ հայրը. ես քեզ ակնոց կդնեմ, միայն թէ մանկական ակնոց»: Եւ տղուն այբբենարան կգնէ:

5. ԱՅլ.

Անձրւ, անձրւ, ցած արի,
Բուսցուր ցորեն ու գարի,
Բուսցուր ծաղիկ, կանաչ խոտ,
Եւէ փոշէ, մաքրէ օդ:
Անձրւ, անձրւ, ցած արի.
Դալդ ամենուս բարի:

6. ԽԱՎԵՆ ինչ հինեն.

Սեղանը կշինեն փայտէ, կտաւը կգործեն կանեփիէ: Կօշիկը կկարեն կաշիէ, կացինը կկռեն երկաթէ: Հացը կթխեն ալիւրէ, ապուրը կեփեն մնէ: Իւղը կհանեն կաթէ, ճրագը կթափեն ճարպէ:

7. ԳՐԵՊԱՍ-ԵՎ ԵՐԱՊԱ.

Մէկ գիշեր մը գեղացին
Փիլաւ տեսաւ յերազին.
Դգաւ ըռներ որ ուտէր:
Ելաւ դգաւ մը առաւ,
Պառկեցաւ ու քուն եղաւ.
Կորէն փիլաւ չտեսաւ:

8. Ի՞՞ ուի.

Պապին բողկ տնկեց. ջրեց, հոգաց, ինսամեց,
բողկը մեծցաւ աճեցաւ, պապին ալ մէկ օր
սկսաւ բողկը գետնէն դուրս քաշել. քաշեց
քաշեց, քաշել հանել չկարողացաւ:



Պապին օգնութեան կանչեց մամիին . մամին բռնեց պապիէն , պապին բողկէն . քաշեցին քաշեցին , քաշել հանել չկարողացան :



Մամին օգնութեան կանչեց մամուկին . մամուկը բռնեց մամիէն , մամին պապիէն , պապին բողկէն . քաշեցին քաշեցին , քաշել հանել չկարողացան :



Մանուկը օգնութեան կանչեց շունին . շունը բռնեց մանուկէն , մանուկը մամիէն , մամին պապիէն , պապին բողկէն . քաշեցին քաշեցին , քաշել հանել չկարողացան :



Շունը օգնութեան կանչեց կատուին . կատուն բռնեց շունէն , շունը մանուկէն , մանուկը մամիէն , մամին պապիէն , պապին բողկէն . քաշեցին քաշեցին , քաշել հանել չկարողացան :



Կատուն օգնութեան կանչեց մուկին . մուկը բռնեց կատուէն , կատուն շունէն , շունը մանուկէն , մանուկը մամիէն , մամին պապիէն , պապին բողկէն . քաշեցին քաշեցին , քաշել հանել չկարողացան :



Մուկը օգնութեան կանչեց մամուկին . մամուկը բռնեց մուկէն , մուկը կատուէն , կատուն շունէն , շունը մանուկէն , մանուկը մամիէն , մամին պապիէն , պապին բողկէն . քաշեցին քաշեցին , քաշել հանել չկարողացան :



Մամուկը օգնութեան կանչեց մոծակին . մոծակը բռնեց մամուկէն , մամուկը մուկէն , մուկը կատուէն , կատուն շունէն , շունը մանուկէն , մանուկը մամիէն , մամին պապիէն , պապին բողկէն . քաշեցին քաշեցին , վերջապէս բողկը գետնին մէջէն հանեցին . իրենք ալ զարնուեցան ընկան գիտին :



9. Պապին

Ջիւնը սպիտակ է : Ածուխը սև է : Մո-

Խիրը գորշ է : Շագանակը թուխ է : Ոսկին
դեղին է : Ալոտը կանաչ է : Երկինքը կա-
պոյտ է : Արիւնը կարմիր է :

Կաթը սպիտակ է : Թանաքը սև է : Ամ-
պերը գորշ են : Դեղձանիկը դեղին է : Ծառը
կանաչ է : Լեղակը կապոյտ է : Վարդը կար-
միր է :



10. Ազետակ.

Արեգակը բոլորակ է : Նա կփայլի ոսկիի
պէս : Առաւօտուն արեգակը կծագի, երե-
կոյին մայր կմտնէ : Երբ արեգակը կծագի,
կլուսանայ ու ցորեկ կըլլայ : Երբ մայր կմտնէ,
կմթնի ու գիշեր կդառնայ : Արևուն ծագած-
և մտած ժամանակները երկնքին ամպերը
կփայլին կարմիր ու դեղին գոյներով :

11. Աքե.

Աքե, արե, արի դուրս,
Քեզ բերել ենք աշքի լցու.
Քո քուրիկդ լուսինկան
Զամիչ բերաւ մէկ աման :

Ամազը եկաւ մութ արաւ .

Զամին աշքերէս կորաւ :

Բաց երեսդ, արեգակ .

Մէկ բուռ չամիչ քեզ կուտանք :

Օ՞ն, արեկին խաբեցինք .

Ամպի տակէն հանեցինք :

12. Առաստան .

Արեգակը ծագել է : Լուսացել է : Թուչուն-
ներն արդէն զարթել են, ու կերգեն ծառերու
վերայ : Տղայքն ու աղջիկները, գրքերուն
քսակները ձեռքերը բռնած, ուրախ ուրախ
դպրոց կերթան : Ես ալ ելնեմ . ի՞նչ պառկել
եմ : Սեղանի վերայ արդէն կեփի ջեռուցիչը :
Շուտ անեմ, երեսս լուսանամ, գլուխս սան-
տրեմ, ու զգեստներս հագնիմ . թէ չէ, դա-
սերէս կուշանամ :



13. Տղայ և կնոջանէ +.

Ժամանակով փոքրիկ տղայ մը կար . Հայրը
և մայրը զինքը դպրոց յուղարկեցին : Մէկ
գեղեցիկ առաւօտ տղան չուզէ դպրոց եր-

Թալ, հապա խաղալ կուզէ: ՄԵԿ մը աչքերը
չորս կողմը կդարձնէ, կտեսնէ մեղու մը որ
մէկ ծաղկէն մէկալը կթռչտէր: «Մեղու,
կասէ տղան, խաղա քիչ մը ինձ հետ: —
Ոչ, կպատասխանէ մեղուն, խաղալու ժա-
մանակ չունիմ. պէտք է մեղը ժողովեմ:»



Տղան քանի մը քայլ առաջ կերթայ, շունի
մը կպատահի ու կասէ նորա. «Շնիկ, եկ
խաղա քիչ մը հետո: — Ոչ, կպատասխանէ
շունը, խաղալու ժամանակ չունիմ. պէտք է
երթամ տիրոջս տան քով պահպանութիւն
անեմ, որ գող չմտնէ ներսը:»



Քիչ մը հեռու տղան թռչուն մը կտեսնէ
որ կտուցը խոտի կտորներ առած կտանէր,
ու կասէ նորա. «Թռչուն, եկ խաղա քիչ մը
ինձ հետ: — Ոչ, կպատասխանէ թռչունը,
ես խաղալու ժամանակ չունիմ. պէտք է խոտ,
փետուր և բուրդ ժողովեմ, որ բոյնս շինեմ:»



Յետոյ ձիուն կպատահի տղան ու կասէ.
«Զի, խաղա քիչ մը հետո: — Ոչ, կպա-
տասխանէ ձին, խաղալու ժամանակ չունիմ.
պէտք է երթամ գետին չերկեմ որ ցորեն
ցանեն: Եթէ գետին չերկեմ, ուր պիտի ցա-
նեն ցորեն. և եթէ ցորեն ցանուի, ինչ պիտի
ուտեն մարդիկ: — Ուրեմն մէկն ալ չուզէ
խաղալ, կասէ տղան մտքէն. կտեսնեմ որ
ինձ ալ աշխատիլ պէտք է:»

Այս կասէ ու կելնէ մէկէն դպրոց կերթայ:



14. Գիշեր.

Արեգակը մայր մտել է. մթնել է: Դուրսը
մէկ ձայն ալ չը լսուի: Ոչխարներն ու կովերը
արդէն տուն դարձել են արօտատեղէն: Թըր-
չունները գուն եղել են: Խանութպանները
խանութները կփակեն ու տուն կերթան: Եր-
կընքին երեսը կերսին լուսինն ու աստղերը:
Լուսինը լոյս կուտայ, աստղերը կպսպղան:
Շուտով պէտք է հանուիլ, անկողին մտնել
ու պառկիլ:

15. Ամ անկաղինս .

Արդէն մութ է, և ես յոգնած եմ։ Եր-
թամ պառկիմ անկողինս։ Անկողնի մէջ տաք
է ու փափուկ։ Երբոր լուսանայ, դարձեալ
կելնեմ տեղէս։ Մենք պէտք չէ որ երկար
ատեն քուն ըլլանք։ Ով որ հիւանդ է, ցե-
րեկն ալ պառկած պիտի կենայ անկողնի մէջ։
Երբոր կպառկինք քուն ըլլալու, աղօթք պիտի
անենք։

**Նոյնպէս աղօթք պիտի անենք առաւօտուն
երբոր տեղերէս կելնենք :**

16. *O. ፳፻፲፭.*

Մենք զգեստ կհագնինք որ չմրսինք : Ես
ունիմ գդակ ու թիկնոց, բաճկոն ու տաբատ,
կօշիկ ու գուլպայ : Կիրակի և տօն օրերը ես
նոր զգեստներս կհագնիմ : Թիկնոցս գրպան
ունի : Գրպանիս մէջ կպահեմ թաշկինակս :
Զգեստները ո՞վ կկարէ . դերձակը : Ո՞վ կը-
մաշէ ու կպատռոէ զգեստները . տղայքը :
Ո՞վ կկարկտէ պատռոտած զգեստներն ու ծա-
կած գուլպաները . սիրելի մայրիկը :

17. ማኅበርያኝ ዘግለጫ

Գէորգ գնաց դրացւոյն տունը մտաւ, և
տեսաւ որ մէկ բան կարգին չէ: Տղայքը
կեղտուա, զգեստները պատռտած, գլուխները
չսանտրած: Փոքրիկները ցեխոտ յատակին
վերան քաշ կուգան, ուրիշ երկու տղայ կծեծ-
կուին, իսկ ամենէն մեծը հիւանդ պառկած
է, և զինքը նայող չկայ: Գէորգ միտքը բե-
րաւ որ դրացւոյն կինը մեռած է. միտքը
եկաւ և իւր մայրը, վագեց գնաց տուն և
մօրը վիզը փաթթուեցաւ:

18. በዚህ ንግድ እና ተብሎም ስት.

Մինաս վազեց գնաց պարտէզ, քրոջը
ձեռքէն խլեց առաւ խումաճիկը, և փայտի
մը վերայ հեծած, սկսաւ պարտիզին մէջ
վազվոտել խումաճիկով։ Քոյրը նստել կուլար։

Մինասին մեծ եղբայրը տնէն դուրս վազեց . տեսաւ որ շատ զուարձալի բան է քալցնել խումաճիկը պարտիզին մէջ , և Մինասին ձեռքէն խլեց առաւ խումաճիկն ու

փայտէ ձին։ Մինաս գնաց հօրը գանգատելու. իսկ հայրը պատուհանը նստած ամէն բան տեսել էր։ Հայրը ի՞նչ ասաց Մինասին։

19. ԳԵՂԱԳ-ԱՅՆ ԱՐԱ-ԳՈՒ-ՔՐ.

Հարուստ վաճառական մը գետի մը մէջ կլուացուէր։ Յանկարծ ջրին մէկ խոր տեղն ընկաւ, և քիչ մնաց պիտի խղդուէր։ ծեր գեղացի մը կանցնէր այն տեղէն. լսեց խըղդուողին ձայնը, ջուրը նետուեցաւ, ու վաճառականը ողջ առողջ դուրս հանեց։ Վաճառականը քաղաք հրաւիրեց զինքը իւր տունը, լաւ ճաշ մը տուաւ նորա, և կտոր մը ոսկի պարգևեց նորա ձիու գլխու մեծութեամբ։



Գեղացին ոսկին առաւ ու տուն կղառնար. ճանապարհին ձի ծախող մը ելաւ դիմացը, որ շատ մը ձիեր առջևը ձգած կքշէր։ «Բարե, ծերուկ. ո՞ր տեղէն կուգաս։ — Քաղաքէն, հարուստ վաճառականի մը տնէն։ — Վաճառականն ի՞նչ տուաւ քեզ։ — Ձիու գլխու մեծութեամբ ոսկի։ — Եւ ո՞ւ է ոսկին։ — Փիուէ ձիդ սրտիդ հաւնած եղին հետ։» Ծերուկը ընտրեց առաւ ամենէն լաւ եղը, ու առաջ գնաց։

մը։ — Տուր ինձ այդ ոսկին, ընտրէ առ ամենէն լաւ ձիս։» Ծերուկը ամենէն լաւ ձին առաւ, ու ճանապարհը շարունակեց։



Դիմացը եղնարած մը ելաւ, որ շատ մը եղ կքշէր առջևէն։ Բարե, ծերուկ. ո՞ր տեղէն կուգաս։ — Քաղաքէն, վաճառականի մը տնէն։ — Վաճառականն ի՞նչ տուաւ քեզ։ — Ձիու գլխու մեծութեամբ ոսկի։ — Եւ ո՞ւ է ոսկին։ — Այս ձիու հետ փոխեցի ոսկին։ — Փոխէ ձիդ սրտիդ հաւնած եղին հետ։» Ծերուկը ընտրեց առաւ ամենէն լաւ եղը, ու առաջ գնաց։



Դիմացը խաշնարած մը ելաւ՝ ոչխարներու երամակ մը առջևը ձգած։ «Բարե, ծերուկ. ո՞ր տեղէն կուգաս։ — Հարուստ վաճառականի մը տնէն, քաղաքէն։ — Վաճառականն ի՞նչ տուաւ քեզ։ — Ձիու գլխու մեծութեամբ ոսկի։ — Եւ ո՞ւ է ոսկին։ — Ձիու մը հետ փոխեցի։ — Հապա ձին ո՞ւ

Ե : — Եղիս հետ փոխեցի : — Տուր ինձ եղդ, ու սրտիդ հաւած ոչխարն առ : «Գեղացին ընտրեց առաւ ամենէն լաւ ոչխարն, ու առաջ գնաց :



Դիմացը խոզարած մը ելաւ շատ մը խոճկորներ առջեր ձգած : «Բարե, ծերուկ. ո՞ր տեղէն կուգաս : — Փաղպէն, հարուստ վաճառականի մը տնէն : — Վաճառականն ի՞նչ տուաւ քեզ : — Զիու գլխու մեծութեամբ ոսկի : — Եւ ո՞ւր է ոսկին : — Զիու մը հետ փոխեցի : — Հապա ձին ո՞ւր է : — Եղի մը հետ փոխեցի : — Հապա ձին ո՞ւր է : — Եղի մը հետ փոխեցի : — Հապա եզը ո՞ւր է : — Ոչխարիս հետ փոխեցի : — Ոչխարն ինձ տուր, սրտիդ հաւած խոճկորն առ : » Գեղացին ընտրեց առաւ ամենէն լաւ խոճկորն, ու առաջ գնաց :



Դիմացը սապատաւոր փերեզակ մը ելաւ վաճառքի արկղը կոնակը գարկած : «Բարե, ծերուկ. ո՞ր տեղէն կուգաս : — Վաճառա-

կանի մը տնէն, քաղաքէն : — Վաճառականն ի՞նչ տուաւ քեզ : — Զիու գլխու մեծութեամբ ոսկի : — Եւ ո՞ւր է ոսկին : — Զիու մը հետ փոխեցի : — Հապա ձին ո՞ւր է : — Եղի մը հետ փոխեցի : — Հապա եզը ո՞ւր է : — Ոչխարի հետ փոխեցի : — Ոչխարն ի՞նչ արիր : — Խոճկորիս հետ փոխեցի : — Խոճկորդ ինձ տուր, ուզած ասեղդ առ : » Գեղացին ընտրեց առաւ գեղեցիկ ասեղ մը, ու առաջ գնաց : Վերջապէս տուն որ հասաւ, ցանկին վերայէն ցատքեց, և ասեղը կորուս :



Պառաւը ծերուկին դիմացը վազեց : «Ախ, հոգիս, առանց քեզ կմեռնէի ես այստեղ մենակ : Ասա նայիմ, գնացիր վաճառականին տունը : — Գնացի : — Ի՞նչ տուաւ քեզ : — Զիու գլխու մեծութեամբ ոսկի : — Եւ ո՞ւր է ոսկին : — Զիու մը հետ փոխեցի : — Հապա ձին ո՞ւր է : — Եղի մը հետ փոխեցի : — Հապա եզը : — Ոչխարի հետ փոխեցի : — Հապա ոչխարն ի՞նչ արիր : — Խոճկորի հետ փոխեցի : — Խոճկորն ո՞ւր է : — Խոճկորը

տուի, ասեղ մը առի. կուզէի քեզ պարզեց
մը անել. բայց ցանկին վերայէն ցատքած
ժամանակս, ասեղն ընկել է ծոցէս: — Եհ,
փառք Աստուծոյ, Հոգիս, որ դու ողջ ա-
ռողջ տուն դարձար: Երթոնք կերակուր
ուտենք:»

20. Գառան-ին լոյն.

Ինչու կուշաս դու, դառնիկ:

Շատ ծեծ կերայ ես, մայրիկ:

Ո՞վ ծեծեց քեզ, խեղջ գառնիկ:

Մէկ ծեր պառաւ չար կնիկ:

Ինչու ծեծեց քեզ, դառնիկ:

Ապածէի ես, մայրիկ:

Ո՞ր տեղ ծեծեց քեզ, դառնիկ:

Մէկ մեծ ծառի տակ, մայրիկ:

Ինչու ծեծեց քեզ, դառնիկ:

Գաւազանով մը, մայրիկ:

Ո՞ր տեղիդ զարկաւ, դառնիկ:

Ոտիկնելուս, ախ մայրիկ:

Ի՞նչպէս լացիր դու, դառնիկ:

Մէ, մէ, մէ, մէ, մէ, մայրիկ:



21. Ուուելէն և ըմպէն.

Առանց ուտելիքի մարդս կմեռնէր քաղ-
ցածութենէ. առանց ըմպելիքի կմեռնէր ծա-
րաւէ: Մարդիկ իրենց ուտելիքը կպատրաս-
տեն բոյսերով, կենդանեաց մսովը, և աղով:
Ես կուտեմ հաց ու գաթայ, միս ու պանիր,
ապուր ու փիլաւ, ճուկ ու հաւկիթ, լոբիա
ու սիսեռ, ձմերուկ ու սեխ, տանձ ու խնձոր,
և ուրիշ շատ բաներ: Ես կխմեմ ջուր ու
կաթ, չայ ու սուրճ, գինի ու գարեջուր:
Ամենէն անհրաժեշտ ուտելիքն է հացը. ա-
մենէն անհրաժեշտ և առողջարար ըմպելիքն
է ջուրը: Ո՞վ է մեզ կաթ ու միս տուողը.
Կովերն ու ոչխարները:

22. Դարրոց Հջ.

Եղբայրը դպրոցէն տուն դարձաւ: Փոքր
քոյրը հարցուց նորա թէ դպրոցն ի՞նչ կա-
նէք: Եղբայրն ալ տեղն ի տեղը պատմեց
նորա ինչ որ դպրոցի մէջ կանեն: Ուսուցիչը
նստած է աթոռի վերայ սեղանի մօտ: Աշ-
կերտները նստած են նստարաններու վերայ

գրասեղաններու առջևը : Ուսուցին մօտ
դրուած է մէկ մեծ գրատախտակ : Գրա-
տախտակի վերայ կգրեն կաւիճով : Աշակերտ-
ներուն առջևը դրուած են պնակիտներ : Պնա-
կիտներու վերայ կգրեն քիսով : Ուսուցիչը
կսովորեցնէ , աշակերտները կսովորին : Ու-
սուցիչը բան կհարցնէ , աշակերտները պա-
տասխան կուտան : Աշակերտներէն ոմանք
գիր կգրեն , ոմանք կկարդան , ոմանք ալ
կգծագրեն :

23. Մասունք և օյ .

Տղուն մէկը օձ մը բռնեց .
Օձաձուկ կարծէր , խարուեցաւ :
Վախէն պատին դողը բռնեց ,
Երեսին դժնը պատ դարձաւ :
Օձը նայեցաւ նայեցաւ տղուն ,
„Օօ , ում հետ , ասաց , կուզիս խաղալ դուն
թէ շնելօքնաս գէթ այսուհետեւ ,
Գիտնաս շըխալսիս միշտ այսպէս թեթէւ :
Այս անդամ քեզի կներէ Աստուած .
Բայց ուրիշ ատեն աշքդ աղեկ բաց :
Կատախներ անել թէ կուզիս , արա .
Միայն աես առաջ դիմացդ ով կայ :

24. Գրատախտակ .

Գրատախտակը հիւսը կըշինէ փայտէ , և
յետոյ կներկեն զայն սև ներկով : Գրատախ-
տակը քառանկիւնի է , և կեցած է շարժա-
կան ոտքերու վերայ , կամ պատէն կախուած
է : Գրատախտակը միշտ դասարանը կմնայ :
Վերան կգրեն կաւիճով :

25. Պնակէնք .

Պնակիտը կտրուած է հերձաքարէ . հիւմն
ալ փայտէ շրջանակի մէջ անցուցած է զայն :
Պնակիտները դրուած են աշակերտաց առ-
ջևը : Աշակերտք տուն կտանին իրենց պնա-
կիտները : Պնակիտի վերայ կգրեն քիսով :

26. Բարեկէրդ եղբայրը .

Արամ կեցել էր պարտիզին դուռը , ու
կնայէր թէ ինչպէս դրացին ծառերուն վե-
րայէն պտուղները կքաղէ : Դրացին տեսաւ
զտղան , քովը կանչեց , ու տուաւ նորա մէկ
մեծ տանձ : Արամ բերանը տարաւ տանձը
որ խածնէ . բայց մտածեց քիչ մը , ու վա-

զելով ելաւ տուն գնաց : Իւր քոյրը Մանուշակ տունը հիւանդ պառկած էր : Արամ ներս մտնելով հարցուց մօրը . «Մանուշակը կարող է տանձ ուտել . վսաս չէ նորա : — կարող է , վսաս չէ , պատասխանեց մայրը :» Արամ թռաւ գնաց քրոջը անկողմին քով , տանձը նորա տուաւ , և գոհ սրտով կնայէր թէ ինչպէս քոյրը մեծ ախորժակով կուտէր այն համեղ պտուղը :

27. Ա Է Ւ Ե Ա Հ.

Սենեակը ունի յատակ , առաստաղ և չորս պատ . երկու պատերը փոքր ինչ երկայն են , և միւս երկու պատերը փոքր ինչ կարճ : Պատերուն մէջ դռներ ու պատուհաններ բացուած են . պատուհաններէն լոյսը ներս կմտնէ , դռներէն մարդիկ կմտնեն կելնեն : Սենեկին մէջ կայ վառարան , մէկ սեղան , մէկ դարանակ , մէկ պահարան և շատ աթոռներ : Պատէն կախուած է մէկ հայելի : Վառարանը ձմեռը կվառեն : Սեղանի վերայ չայ կիսեն , ճաշ և ընթրիք կուտեն , կամ կգրեն ու կկարգան : Պարանակի մէջ

ճերմակեղէնը կպահեն , պահարանի մէջ ալ զգեստները : Ինչու համար են աթոռներն ու հայելին : Սենեակը զմեզ կպահպանէ անձրևէ , արևէ , քամիէ ու ցուրտէ :

28. ԵՐԵՒ- ՊՊԱՅ+ և ընկցու:

Երկու փոքրահասակ տղայք գեղին մօտ մէկ մեծ ծառի մը տակը մէկ ընկոյզ գտան . «Իմս է , ասաց Գեղամ . քանզի ամենէն առաջ ե՞ս տեսայ զայն : — Ոչ , իմս է , պատասխանեց Միհրան . վասն զի ե՞ս վազեցի գետնէն վերուցի :»

Սորա վերայ տղայոց մէջ կոիւ սկսաւ : Նոյն միջոցին այն տեղէն երիտասարդ մը կանցնէր , որ դարձաւ ասաց նոցա . «Կեցէք ես հաշտեցնեմ զձեզ .» Այս ասելով երկու տղայոց մէջտեղը մտաւ , առաւ ընկոյզը կուրեց ու ասաց . «Փեճեկներէն մէկը նորան է որ ամենէն առաջ տեսաւ ընկոյզը . միւս փեճեկին ալ նորան է որ վազեց վերուց զայն : Իսկ միջուկը ինձ կառնում իրեւ վարձ իմ կտրած արդար դատաստանիս :»

29. ԱԿԵՐ ԴԱՍԱՐԱՆԸ.

ՄԵՐ ԴԱՍԱՐԱՆԸ ՄԵԿ ՄԵԾ ԱԵՆԵԱԿ Է. ՈՒՍՏԻ ՈՒՆԻ յատակ, առաստաղ, չորս պատ, և դռներ ու պատուհաններ։ Առաստաղը ծեփած է և սպիտակացուցած։ յատակը դեղին ներկով ներկած է. պատերը կապոյտ թուղթ կպցուած է։ ԱԵՆԵԿԻՆ ՄԵԿ անկիւնը կլոր վառարան կայ. ուրիշ անկիւն մը պահարան մը դրուած է մէջը ուսումնական պիտոյքը պահելու համար. մէկ ուրիշ անկիւն ալ դրուած է գրատախտակը։ Դասարանին մէջտեղերը նստարաններ կան աշակերտաց նստելու համար. նստարաններուն առջելը դրուած է սեղան և աթոռ վարժապետի համար։

30. ՈՐԻ՞ ՀԱՅ-ՀԱՅ.

ՄԿԻ ՏԵՐՈՒԿ ու մէկ պառաւ
Ունեն մէկ ՇԵՐՄԱԿ հաւ։
Հաւը հաւկիթ մը ածեց.
Ի՞սյց հասարակ հաւկիթ չէր,
Հապա ոսկի հաւկիթ էր։
ՕՆԵՐՈՒԿ զարկաւ զարկաւ,

ԿՈՄՐԵԼ ՃՐԿԱՐՈՂԱԳԱւ.

ՊԱռԱՎԸ զարկաւ զարկաւ,

ԿՈՄՐԵԼ ՃԿԱՐՈՂԱԳԱւ։

ՄՈՒԿ մը վազեց, պոչը շարժեց,

ՃԱՎԿԻԹՆ ԸՆԿԱւ ու ԿՈՄՐԵցաւ,

ՓՈՉԻ դարձաւ ու փճացաւ։

ՕՆԵՐՆ ու պառաւը կուլյին։

ԵՅՆ ժամանակ հաւը կանչեց.

,,ՄԻ՛ լար, ծերուկ, մի՛ լար, պառաւ։

ԵՄ ձեղ կածեմ ուրիշ հաւկիթ,

ՈՒ թէ ոսկի, այլ հասարակ։

31. Տ Հ Ա Յ Ա Յ.

ՔՈյրը կհարցնէ եղբօրը թէ ո՛ր տեղ աւելի լաւ է, տո՞ւնը թէ դպրոցը։ Եղբայրը կպատասխանէ. «Դպրոցն ալ գէշ չէ, բայց տունը ի հարկէ աւելի լաւ է։ Տունը կան հայրս ու մայրս, եղբայրներս ու քոյրերս։ Հայրս կաշխատի, մայրս կերակուր կպատրաստէ, աղախինը լուացք կանէ, իսկ տղայքը կսովորին կամ կխաղան։ Տունը ամէն բան ինձ ծանօթ է, սեղաններն ալ, աթոռներն ալ, պահարաններն ալ։ Տունը ամէն սենեակներու մէջ կփաղվուտեմ. կմտնեմ հօրս գրա-

սենեակն ալ, մօրս ննջարանն ալ, դահլիճն ալ, հիւրարանն ալ, խոհանոցն ալ՝ ուր ճաշէն առաջ այնքան անուշ հոտեր կփչեն, մառանն ալ ուր դարակներու վերայ այնքան լաւ լաւ բաներ կան: Տոմը առաւօտները կնախաճաշենք, կէսօրին կճաշենք, երեկոյին կնթրենք, և գիշերները հանգիստ քուն կըլ-լանք մեր անկողիններուն մէջ:

32. Առ և ապանդ.

Էշ մը ազով բեռնաւորած, ծանծաղ առուակ մը հասաւ, և սկսաւ դիմացն անցնիլ. ճանապարհին ոտքը սահեցաւ, ու ջրին մէջ ընկաւ էշը: Երբոր ոտք կանգնեցաւ ու առուակին մէջէն դուրս ելաւ, զարմացմամբ տեսաւ որ բեռը թեթեցել է: «Այս շատ լաւ բան է, ասաց էշը. Ջրին մէջ թէ՛ ինքդ կզովանաս, և թէ բեռդ կթեթենայ: Այս բանս մտքերս պահենք:»

Մէկ քանի օրէն մեր իշուն նորէն պատահեցաւ նոյն ճանապարհով երթալ. բայց այս անգամ սպունդ բարձած էին կոնակը: Առուակին մէջտեղերը որ հասաւ, դիտմամբ

ջրին մէջ ընկաւ, որպէս զի դարձեալ բեռը թեթենայ. բայց այս անգամ հակառակը պատահեցաւ: Որքան ալ նկրտեցաւ չարչարուեցաւ, ոտքի վերայ կանգնիլ չկարողացաւ, ու խղդուեցաւ:

33. Հ ա յ.

Հացը կեփին կամ իրենք տունին տէրերը, կամ հացագործները: Հացը խմորէ կթիւեն: Խմորը կշաղուեն ալիւրով, ջրով և խմորոցով կամ ըմպելեաց դիրտին փրփուրովը: Ալիւրը աղօրէպանը կաղայ ցորենէ: Ցորենը կհասուանայ արտերը հասկերու մէջ: Արտերը գեղացիք կմշակեն: Գեղացիք արտը կհերկեն ու ցորեն կցանեն. բայց ցորենը բուսցնողն ու աճեցնողը Աստուած է. Աստուած է որ կյուղարկէ մեզ ամառ, անձրև, ջերմութիւն և պայծառ արեւ:

34. Աւովն և ալուս.

Աեղանը հիւսը կշինէ փայտէ: Աեղանը ունի երեսի տախտակ, դուրձ և ոտքեր: Երեսի տախտակները կշինուին կամ բոլորչի, կամ քառանկիւնի, և կամ ձուածե: Աթոռը նոյնքառանկիւնի,

պէս հիւսը կշինէ փայտէ : Աթոռն ունի թիւկումք, նստարան և ոտքեր : Նստարանը կըլլայ կամ պարզապէս փայտէ, կամ յարդէ հիւսած, կամ մէջը կակուղ բան լցած ու վերան մէկ որւե իցէ կերպաս քաշած :

35. Կապի և ակաց .

Կապին մէկը ծերացել
Ըշքին զօրքն ալ պակսել էր . . .
Բայց մարդկանցմէ լսել էր
Թաէ այն չարն ալ ունի ճար . . .
Ճարնէ ակնոց գնել աչքին անպատճառ :
Կերթայ իրեն ակնոց կառնու հինգ վեց հատ,
Մողիս անդին կդարձնէ յուսահատ . . .
Մէկ մը կառնու զիսուն վերայ կդնէ,
Ծնկց կիծնէ պոշն վերայ կանցընէ,
Ահոտոսէ ու կղզէ ապակին . . .
Ծկնոցին շահ մը չը տեսնէ իւր աչքին :
„Գնտինն անցնի, կասէ յանկարիծ զայրագին . . .
Խենթ է ով որ հաւտայ մարդկանց ասածին . . .
Ահա ինչ որ գովեստ տուին ակնոցի,
Սուտ է եղել . ես ալ խենթ որ հաւտացի :
Այս կասէ կապին ու ցաւով սրաի
Այնպէս կզարմնէ ակնոցը քարի,
Որ ցուես ցրեխ իսկոյն կոտրտի :

36. Կապուն .

Կատուն ունի գեղեցիկ կակուղ մազ և երկայն ընչացք : Ագին թաւամազ է ու կախընկած : Թաթերուն վերայ ունի սուր սուր ճերաններ : Կրակարանի մօտ պառկած կտաքնայ : Կատուն կմումույ ու կմլաւէ : Կատուն մուկ կբռնէ ու կուտէ . բայց երբեմն թըռչուններ ալ կբռնէ ու կսպաննէ . այդ լաւ չէ արածը : Կատուն շատ գող է . քանի՛ քարածը : Կատուն շատ գող է . քանի՛ քանի անգամ մաի կտորներ, թէ՛ եփած և թէնի անգամ մաի կտորներ, կդողնայ ու կուտէ . այդ ալ լաւ բան հում, կդողնայ ու կուտէ . այդ ալ լաւ բան չէ արածը : Բայց ինքզինքը շատ մաքուր կպահէ . նա մաքրասէր է :

37. Ընծայ և սրտէ .

Նուարդ տիկինը հիւանդ էր . այնպէս որ տնէն դուրս ելնելու կարողութիւն չունէր : Մէկ օր իւր վեց տարեկան տղան քովը կանչեց ու ասաց նորա . «Վաղարշ, այսօր մեծ մօրդ տօնն է . պէտք է երթաս չնորհաւորես նորա տօնախմբութիւնը, և մէկ բանով մը նորա տօնախմբութիւնը, զնա : Առ այս խնձորով լի ուրախացնես . զնա : Առ այս խնձորով լի զամբիւղը ու տար նորա . այս խնձորն ալ

առ, դու կուտես :» Այս ասելով Նուարդ տիկինը մեծ ու գեղեցիկ խնձոր մը տուաւ տղուն :

Վաղարշ իւր խնձորը գրպանը դրաւ, առաւ զամբիւղը ու գնաց մեծ մօրը տունը, ներս մուաւ ու ասաց . «Մեծ օրդ չնորհաւոր, սիրելի մեծ մայր :» Եւ զամբիւղը տալով աւելցուց . «Այս խնձորներս մայրս ընծայ յուղարկեց քեզ :» Յետոյ կամացուկ մը իւր խնձորը գրպանէն հանելով, ցած ձայնով ասաց . «Այս ալ Վաղարշէն քեզ ընծայ :»

38. Մ”-է.

Մուկը փոքրիկ է . մորթը ողորկ է , գորշ ու գեղեցիկ : Դունչը սուր է , սոտքերը բարակ ու կարճ, ագին ալ երկայն : Ոտքերուն վերայ հինգ հինգ մատ ունի սուր սուր եղունգներով : Ի՞նչ կուտէ մուկը . հաց ու պանիր, միս ու ճարպ, իւղ ու շաքար : Մուկը շատ գող է . սուր ատամներովը կկրծէ յատակին տախտակներն ու պահարանը, և ներս կմտնէ : Ի՞նչ որ գտնէ, կգողնայ ու կուտէ :

39. Քաղցրաբէր աղջիւը.

Վարդանուշին մայրը մէկ առաւօտ չայ

կպատրաստէր : «Վարդանուշ, ասաց նա պղկանը, առ դարանին բանալին, ու գնա ինձ մէկ լիմոն բեր :» Վարդանուշը քաղցր բաներ ուտել շատ կսիրէր . ուստի դարանին դուռը բացածովը, սկսաւ քաղցրեղէններ մինտուել : Մէկ դարակի վերայ տեսաւ նա իրեն ծանօթ մեղրի փարչը . արաւ չարաւ, հասաւ փարչին, մատը մէջը երկնցուց որ մեղր առնու : Բայց յանկարծ մէկ բան մը մատը կսմտեց ու ցաւցուց : Աղջիկը վայ կանչելով ձեռքը ետ քաշեց, և ի՞նչ տեսնէ աղէկ . խեչափար մը մատէն կախուել է , և այնպէս ամուր սեղմել է ունելիքներովը, որ Վարդանուշը չկարողացաւ աղատուիլ նորաւուէ : Մեծ եղաւ մօրը զարմանքը տեսնելով աղջիկը լիմոնի տեղ լալով ու ձչելով խեռափար մը կբերէ իրեն :

40. Աւաղջան.

Աքաղաղը հպարտ հպարտ կքալէ բակինմէջ : Գլխուն վերան կարմիր կատար ունի, կտուցին տակն ալ կարմիր մօրուք : Փետուրները գեղեցիկ են ու գոյնզգոյն : Ագին երկայն

է և մանգաղի ձևով ծռած : Ոտքերուն վերայ ունի մէկմէկ երկայն բիտ : Երբ աքաղաղը մէկ հատիկ կգտնէ, կկանչէ իւր հաւերը և նոցա կուտայ ուտելու : Հաւերը շատ անգամ կնային իրարու բերանէն խլել հատիկը . բայց աքաղաղը անկարգութիւն չըսիրէ . իսկոյն հաւերու մէջ խաղաղութիւն կծգէ . մէկուն բուբուլիկէն կքաշէ, մէկալին թևէն, հատիկը ինքը կուտէ, բարձր տեղ մը կելնէ կկանգնի, թևերը կթօթափէ, և բռլոր ուժովը կկանչէ . «Փուքուրիկու :»

41. Խաղաղուն ները .

Արշակ անունով տղան պատուհանը կեցած փողոցը կնայէր, ուր արեւու մէջ շընթըռկել կտաքնար մեծ ահագին շուն մը : Այն կողմէն փոքրիկ շունին մէկը վազեց եկաւ քովը հաջելէն, ատամներովը նորա խոշոր թաթերէն բռնեց, յետոյ դունչէն քաշեց, և խելքովը շատ նեղութիւն կուտար մեծ շունին : «Կեցիր, ասաց Արշակ, նա այժմ քեզ կցուցնէ . լաւ մը կիսրատէ զքեզ :» Նոյն միջոցին շնիկը խաղալէն չըդադրէր . իսկ մեծ

շունը շատ անուշութեամբ վերան կնայէր : Արշակին հայրը դարձաւ ասաց տղուն . «Կտեսնե՞ս . մեծ շունը քեզնէ ո՛րչափ աւելի բարեսիրտ է : Երբ քո փոքրիկ եղբայրներդ ու քոյրերդ քեզ հետ խաղալ կսկսին, խաղին վերջը ա՛յն կըլլայ որ դու զիրենք կծեծես, և կամ ուրիշ գէշութիւն մը կանես նոցա : Իսկ շունը շուն ըլլալովը գիտէ որ մեծը և ուժովը պէտք չէ գէշութիւն անէ փոքրներուն և տկարներուն :»

42. Հ ա մ ա լ ։

Հաւը աքաղաղէն փոքր է . նորա պէս փայլուն թևեր, ծռած ագի ու բիտեր չունի . բայց հաւկիթ կածէ : Հաւկիթ ածածին կկոկուայ և իմաց կուտայ տանտիկնոց : Հաւը աքաղաղէն շատ աւելի օգտակար է : Ածած հաւկիթներուն վերայ թուխս կնստի և ձագեր կհանէ : Նա լաւ մայր ալ է . երբոր որդեր ու հունտեր կգտնէ, գրգալով կկանչէ իւր ձագերը, և նոցա կուտայ ուտելու : Թաւերուն տակը կպահպանէ նա իւր ձագերը նաև անձրևէ և գիշատող թռչուններէ :

43. Բ ա ր ։

Բադը հաւէն մեծ է, և ամբողջ օրը ջրերուն երեսը կանցնէ։ Թէւ նա լաւ կլողայ, բայց քալուածքը շատ տգեղ է, և գրեթէ ամենւին չէ կարող թուչիլ։ Մատերուն մէջերը թաղանթներ ունի որ կօգնեն իրեն լաւ լողալու։ Մարմինը ծածկուած է խիտ խիտ փետուրներով. ուստի և ջուրը չէ կարող փետուրներուն մէջ թափանցել։ Բադին կուտան ուտելու հաց, գարի, վարսակ, թեփ, կորեկ, եփած գետնախնձոր և ուրիշ շատ բաներ։ Դուրսը նա ինքը կգտնէ և կուտէ որդեր, խղունջներ ու մանր ձկներ։ Բադը մեղ կուտայ իւր ձուն, փետուրները և միսը։ Բադի ձուն կեփին, միսը կտապկեն կամ կխորովեն։ Հապա փետուրներէն ի՞նչ կանեն։

44. Խ ո ջ ա ղ ն և ւ դ դ ա մ ։

Գեղացին կաղնի ծառին տակը պառկեցաւ հագստանալու։ Վեր նայեցաւ, ի՞նչ տեսնէ. կաղնիին վերան բիւրաւոր բալուտներ։ Գաղացին մտածեց ու ասաց. «Ի՞նչ

զարմանալի բան, այսպիսի բարձրաբերձ ծառի վերայ այնպիսի մանր մանր պտուղներ կը- բումին։ իսկ դդումը, որ մարդու գլխէն ալ մեծ կըլլայ, բարակ ծղօտի վերայ կը- պումի։ Եթէ ես կարենայի ծառ ստեղծել, այն ժա- մանակ իմ կաղնիիս վերայ հարկաւ դդում կը- պումնէր, և ո՛չ թէ խոզկաղին։»

Յանկարծ քամի ելաւ. բալուտներն սկսան ծառէն վար թափիլ, և մէկ հատը գնաց ընկաւ շիտակ գեղացւոյն երեսին վերայ. և այնպէս ուժով զարկաւ քթին, որ արիւնը աղբիւրի պէս դուրս ժայթքեց. «Հէհէ, ասաց գեղացին. ի՞նչ կըլլար իմ բանս, եթէ կաղնիին վերայէն դդումներ թափէին վե- րաս։ Այժմ կտեսնեմ որ Աստուած ամէն բան շատ իմաստութեամբ ստեղծել է։»

45. Ա ղ ա ղ ն և դ դ ա մ ։

Մեղուն ջուրն ընկաւ, ու քիչ մնաց պիտի խղդուէր։ Քիչ մը հեռու ծառի վերայ աղաւնի մը նստած էր. սա տեսնելով որ մեղուն կիւրդ- մը, խոշոր տերեւ մը փրցուց ձգեց ջրին դուի, խոշոր տերեւ մը փրցուց ձգեց ջրին

Երեսը : Մեղուն մագլցելով ելաւ տերեւին վերան. քամին փչեց տերեւը դէպ ի ցամաք. մեղուն դուրս ելաւ, արեւու մէջ թևերը չորցուց, և թռաւ գնաց իւր փեթակը :

Մէկ քանի օրէն նոյն աղաւնին ծառի վերայ թառած, անհոգութեամբ քուն կըլլար : Նոյն միջոցին որսորդ մը սպրդեցաւ հրացանը ձեռքը, և թուփի մը ետևէն աղաւնին նշան կառնուր : Բայց նոյն րոպէին որ հրացանը պիտի արձակէր, ձեռքը ցնցուեցաւ սաստիկ ցաւէն, գնտակը աղաւնին քովէն անցաւ, և նորա վնաս չտուաւ : Մեղուն էր որ նոյն միջոցին որսորդին ձեռքը խայթեց :

46. Դեղանին և աղաւնիակ.

Դեղձանիկին մէկը յանկարձ
Ինչպէս եղաւ, զգիտեմ,
Թակարթի մէջ բռնուեցաւ,
Ինչ անելը չըդիտէր:
Վ եր կցառքէր ողորմելին
Վ ար կնետուէր յուսահատ.
Օակ մը չկար որ դուրս ենէ.
Կղարնուէր պատէ պատ.

Հոն միամիտ աղաւնիի
Վնփորձ աղատ ձագ մը կար .
Տեսնելու բան էր ինչ կերպով
Ոիւսին վերան կինտար:
,,Վճօթ, ասաց, թռչունիկ,
Վճօթ քեզի, դեղձանիկ .
Ի՞նչ ասիր ու ցորեկ ատեն
Թակարթն ընկար կուրի պէս:
Ես հաւատա որ ոչ երբէք
Վսաբուկի քեզի պէս : «
Դեռ մեծախօս աղաւնիկին
Շերանն էր սուտ պարձանքը,
Ոտիկներով ցանցն ընկաւ
Յանկարձ, տես դու փորձանքը:
Եւ օի եղաւ, կըծ եղաւ .
Թառը չինտար այն միամիտ աղաւնին
Ուրիշներուն դիմուն եկած փորձանքին :

47. Պայտ.

Գեղացի մը իւր Վարդան անունով փոքր տղուն հետ գեղէն քաղաք կերթար : «Նայէ, կասէ հայրը տղուն . ճանապարհին վերայ պայտ մը կայ . գնա առ ու գրպանդ դիր : — Էհ, հայր, կպատասխանէ Վարդան, այնպէս չընչին բանի համար կարժէ որ գետին ծռիմ :»

Հայրը առանց մէկ բան ասելու, կերթայ կառնու պայտը, ու գրպանը կդնէ։ Ճանապարհին կծախէ պայտը պայտարի մը մէկ քանի դրամի, և այն ստակով կեռաս կդնէ։

Անկից կելնեն առաջ կերթան։ Ամառուան արևը կարծես թէ կրակ կթափէր երկնքէն. ճանապարհին մօտերը ընդարձակ տեղ մը ոչ տուն կերևէր, ոչ ծառ և ոչ աղբիւր, որ կարենային քիչ մը զովանալ։ Վարդան ծարաւէն կպապակէր, և շատ դժուարութեամբ կքալէր հօրը ետևէն։

Հայրը դիտմամբ կեռաս մը վար կձգէ. Վարդան իսկոյն վերան կվագէ, և գետնէն վերցնելն ու բերանը նետելը մէկ կանէ. անով բերանը քիչ մը կզովանայ։ Մէկ քանի քայլ անդին հայրը ուրիշ կեռաս մը վար կձգէ. Վարդան նոյնպէս կվերցնէ ու բերանը կտանի։ Այս կերպով Վարդան մէկիկ մէկիկ բոլոր կեռասները կվերցնէ հետզհետէ։

Երբոր վերջին կեռասը կվերցնէ ու կուտէ, հայրը կդառնայ իրեն ու ծիծաղելով կասէ. «Տեսա՞ր. եթէ դու մէկ անդամ միայն

գետին ծռէիր ու պայտը վերցնէիր, այժմ հարկ չը լլար քեզ այնքան անդամ խոնարհիլ կեռասներուն համար։»

48. Անցութ + և շան +.

Երկու հոգի իրիկուան
Տեղ մը եկել կերթային,
Ու հարկաւոր բանի վրայ
Ախոսէին մէջերնին։
Մէկ մ' ալ յանկարծ հառ արաւ
Տան մը դրանը տակէն
Խոշոր շուն մը դուրս ցատքեց,
Վերայ վագեց հաջելէն։
Միւսն անդիէն ձայն ձգեց.
Ետևէն մէկն ալ եկաւ.
Որն ալ փողցն էր պառկած,
Իսկոյն տեղէն վեր թռաւ։
Վերջապէս մէկ լոպէէն
Այնքան շուն դուրս թափեցաւ
Վանը ու խոշոր, որ շնոր
Բողոր ճամբան լցուեցաւ։
Մարդկանց մէկուն սիրսն ելաւ,
Դարձաւ դէպ այն շներուն,
Վարձաւ ծով որ առնու

Վար մը նետէ զլինուն :
 Թաղ տուր, եղբայր, բան շունիս,
 Ասաց նորա ընկերը .
 Մեղք չէ ձեռքիդ որ քարով
 Արես գուն այդ լիրբերը :
 Շուն ասածդ իրատելուն
 Ամենէն լու հնարքը
 Կորա երես չտալն է.
 Չդիտե՞ս շան բարքն ու վարքը :»
 Իրաւ, հազիւ տասը քայլ
 Մարդիկն առաջ գնացին,
 Շներն իրար նայելով
 Զայնելնին ալ կարեցին :

49. Պատմագուն և էլ.

Ջաղացպան մը իւր որդւոյն հետ մօտակայ քաղաքը կերթար այլ և այլ բաներ գնելու . և որպէս զի ի դարձին ինքը չըեռաւուրուի գնած բաներովը, էշն ալ հետը առել էր : Ջաղացպանն ու որդին ոտքով կերթային, էշն ալ երասանակէն բռնած հետերը կտանէին : Ճանապարհին սաստիկ ցեխ էր : Անցորդ մը կելնէ նոցա առջել ու կասէ . «Եիտակն ասեմ, ես եթէ քո տեղդ ըլլայի,

կօշիկներս չը՝ մաշէի այսպիսի ճանապարհով, երբոր էշս պարապ պարապ կերթայ :» Եիտակ է ասածը, կասէ ջաղացպանը մտքէն, կհեծնէ իշու վերայ, և այնպէս կշարունակէ ճանապարհը. իսկ որդին ետևէն կերթար հետի:

Ուրիշ անցորդ մը դիմացները կելնէ ու կասէ . «Ամօթ չէ՝ քեզ. դու հանգիստ հանգիստ նստել ես իշու վերայ, իսկ խեղճ տղան ետևէդ հասնելու կարողութիւն չունի : — Իրաւ է, կասէ ջաղացպանը, որդիս յոգնել է :» Ինքը էշէն վար կիշնէ ու որդին կնըստեցնէ : Հազիւ հարիւր քայլ առաջ գնացել էին, երրորդ անցորդ մը կկանչէ : «Այսպէս էին, երրորդ անցորդ մը կկանչէ : Այսպէս անխելք մարդ : Միթէ չէ՝ կարող որդւոյն հետ մէկտեղ նստիլ իշուն վերայ . բայց ոչ, ցեխի մէջ թաւալիլ կուզէ սիրուը : — Այդ ալ իրաւ է, կասէ ջաղացպանը մտքէն . այս առաջին ամսգամը պիտի չըլլայ իշուս այնչափ ծանրութիւն տարածը :» Այս կասէ ու կելնէ տղուն քովը կնստի :

Քաղաքին դռնէն ներս մտածներուն պէս, ամէն կողմէն ժողովուրդը չորս կողմերը կդիւ-

զուին ու կկանչեն. «Այսպէս ալ անխիղձ
մարդիկ. իրենք հանգիստ հանդարտ նստել
են, և հոգերն ալ չէ որ խեղձ կենդանին
հազիւ ոտքերը կվերցնէ :» Այս խօսքերուս
ետևէն հայհոյանքներ ու բարձրածայն ծի-
ծաղներ կլսուէին : «Ո՞հ, Տէր Աստուած,
կկանչէ ջաղացպանը իշու վերայէն վար ցտո-
քելով . այն միայն մնացել է, որ ես էշը
շալակս առնում ու տանիմ : Երթամ ծա-
խեմ էշս :» Այս կասէ, ու կերթայ կծախէ
էշը :

50. Թաւու-լն Գալաճօշը .

«Հոգիդ սիրես, կնքահար,
Ենուշ արա, հրամէ կեր:
— Խիստ շատ կերայ, սանահար.
Մինչև սըսելը է հասել:
— Հոգ չէ, պնակ մ' ալ հրամէ.
Աս չուտելու ապուր չէ:
— Բայց, սանահար, գիտցածս,
Երեք պնակ է կերածս:
— Թաղ մարդ, համբել ինչ պէտք է.
Բանն ախորժիդ վերան է:
— Կեր կերածիդ չափ, անուշ.
Աղրա կասին գալաճօշ :

Եղն երեսին կծփայ,
Տես սալթի պէս կցողայ:
Կեր, կնքահար, մի քաշուիր .
Այսպէս բան միշա չըգտնուիր:
Սա տոխը կեր . սա միսն ալ .
Ո՞հէ կտոր ալ. մէկ դգալ:
Օրհնեալ է ձեռքն եփողին,
Ապրած կենայ տանտիկին : «
Այս կերպիրով թաթուլը
Խէջ աղբօր յարգինք կանէր
Աչք բանալու ատեն չըտար,
Երկու խօսքին մէկն էր կեր:
Խէջն վաղուց արիւն քրտինք էր մտել.
Բայց ինչ անէր, պէտք էր պնակ մ' ալ ուտէր:
Բողոք ուժը մէկ արաւ,
Երտի պնակն ալ կերաւ:
Ապրիս, կանչեց թաթուլը, աչքդ սիրեմ.
Ես բարեկամն ահա այսպէս կսիրեմ.
Խակ կրախտուող նաղելին
Է՛ իմ առջի ատելին :
Ո՞հէ պնակ մ' ալ կնքահար : «
Խեղձ Խէջ աղբար
Ասս որ լսեց, ինչ անելը չպիտցաւ.
Դրակին ու գօտին առնել փախչիլը մէկ արաւ.
Շունչը հազիւ տունն առաւ:
Խակ թաթուլին տունը ոտքը մէկ մ' ալ չիրաւ:

ԵՂՈԹԱՔ.

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Արքոյ:

Օրհնեալ համագոյ և միասնական անբաժանելի սուրբ Եղբարդութիւն Հայր և Որդի և Հոգի Սուրբ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղջուն Մէլքոնական.

Հայր մեր որ յերկինս, սուրբ եղեցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղեցին կամք քո որպէս յերկինս և յերկի: Օհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի տանիիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա զմեզ ի չարէ: Օհի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն:

Երեւալին իստահանունըն:

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողողմեա մեզ (երեք անդամ):

Աղոյնան+ առ առ-ըն Աստիւածութիւն.

Ենկանիմք առաջի քո, Աստուածածին, և աղաւեմք զանարատ զկոյսդ, բարեխօսեա վասն անձանց մերոց. և աղաւեա զմիածին Որդիդ փրկել զմեզ ի փորձութիւնէ և յամենայն վտանգից մերոց:

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կըս Աստուածածին Արքիամ մայր Քրիստոսի, մատո զաղաշանս մեր Որդւոյ քո և Աստուծոյ մերոյ:

Աղջուն առ Հայրն ամենակալ.

Ընկալ, Տէր, զաղաշանս մեր բարեխօսութամբ սուրբ Աստուածածին անարատ ծնողի միածնի Որդւոյ քո, և որոց այսօր է յիշատակ: Լուր մեզ, Տէր, և ողողմեա. ներեա, քաւեա, և թող զմեզս մեր: Արժանաւորեա գոհ հութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ Արքոյ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղջուն Եւովեցոյ.

Ի մէջ տաճարիս և առաջի աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանաց և սուրբ տեղւոյս խօնարհեալ երկիւղիւ երկիր պագանեմք: Օսուրբ և զհրաշալի և զյաղթող տէրութիւնդ քորհութիւն և զիաւու ընդ Հօր և քեզ մատուցանեմք զօրհութիւն և զիաւու ընդ Արքոյ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն.

Աղջուն Խաչ:

Առաջի պատուական ամենայաղթ Խաչ քո անկանիմք երկրպագելով, և խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց. քանզի սովու բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան: Եւ այժմ վասն սրբոյ աստուածային քո նշանի շնորհեա զերկնային զիսաղլութիւնդ ամենայն աշխարհի:

Աղօն+ յառա-օգոս+.

Ամենակալ Աստուած, որ ծագեցիր զլցոս առաւօտու
յարարածս քո, ծագեա և այժմ զառատ ողբանւթիւն քո
ի վերայ փառաբանչացս անուանդ քո պրոյ:

Լուսովդ քով, Վրիսատոս, ամենիցեան լուսաւորեցաք,
և ի սուրբ Խօսէ քո, Փրկիչ, հաւասացեալքս ապաւինե-
ցաք: Լուր մեզ, Աստուած փրկիչ մեր, տուր մեզ զեա-
զաղութիւն քո, և արա առ մեզ զողովմութիւն քո, մար-
դասէր Տէր:

Աղօն+ յառա-օգոս+ առ զբանա-նեան.

Ամենակալ Տէր, առաքեա ի մեզ զշնորհս Հոգուցդ
Սրբոյ, զի պարգևեացէ մեզ միտս և խմաստութիւն, և
կազդուրեացէ զջօրութիւն հոգւոց մերոց: Որպէս զի ըստ
արժանուոյն ընդունելով զաւանդեալ մեզ ուսմունս, զար-
դասցուք քեզ Ստեղծողիդ մերում ի փառս, ի միջիթա-
րութիւն ծնողաց մերոց, և յօդուտ Եկեղեցւոյ պրոյ:

Աղօն+ յեա Շասաւո-նեան.

Գոհանամք զքէն, Տէր Աստուած մեր, որ արժանի
արարեր զմեզ շնորհաց քոց յունինդութիւն ուսմանց:
Օրհնեա զծնողս մեր և զրւսուցիս, որք առաջնորդեն
մեզ ի զիտութիւն ճշմարտութեան. և տուր մեզ կարո-
ղութիւն զարդանալոյ յուսմունս օգտակարս:

Աղօն+ յառա-օգոս+ առ ոչալ.

Աչք ամենեցուն ի քեզ յուսան, Տէր, և դու տաս
կերակուր նոցա ի ժամու: Աղաշեմք զքեզ, պարգևեա մեզ

կերակուր ուրախութեան, և լոյ զսիրտս մեր ի լիութենէ
արարածոց քոց:

Աղօն+ յեա Ֆալա.

Կերակրիչ և ուրախարար Տէր, փառք քեզ, լոյ-
ցանող Վրիսատոս, գոհանամք զքէն, որ կերակրեցիր զմեզ
քաղցրութեամբ կամօք քովք: Լցո ուրախութեամբ և
քերկրութեամբ զսիրտս մեր:

Աղօն+ Երեւոյին.

Տէր Աստուած մեր, դու պահեա զմեզ խաղաղու-
թեամբ ի զիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի: Ընդ
սուրբ երկիւղ քո քեւեռեալ պահեա զմիտս և զիսորհուրդս
մեր, որպէս զի յամենայն ժամ քեւ պահպանեալ լիցուք
յորոգայիթից թշնամեցն, և քեզ հանցուք զօրհնութիւն
և զփառս Հօր և Որդոյ և Հոգուցդ Սրբոյ, այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամեն.

Աղօն+ վասն նախա-որին Ձերա.

Տէր Աստուած մեր, կեցո զԱմենաբարեպաշտ Թա-
գաւորն մեր և զԱյսրն ամենայն Ոսւսաց զԱլիքսանդր
Ալիքսանդրովիչ. զօրացո զնս, օգնեա զաւակաց և զօրաց
նորա, պահելով զամենեսին ի խաղաղութեան :

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՒՑ

Ա Ռ Ա Զ Ի Ն Ը Ն Թ Ե Ր Ց Ա Ր Ա Ն Ի Ւ Ւ

Թիվ.	Էջ.	Թիվ.	Էջ.
45 Աշաւնի և մեղու	59	15 Իմ անկողինս	36
32 Աղ և սպունդ	50	6 Խնձէն ինչ զլինէն	29
* 5 Ծնձրւ	28	41 Խաղացող շները	56
17 Ընմայր տղայք	37	44 Խոզկաղին և գդում	58
*48 Ընցորդք և շունք	63	*35 Կապիկ և ակնոց	52
12 Ըռաւոս	33	36 Կատու	53
10 Ըրեգակ	32	33 Հաց	51
*11 Ըրև	32	42 Հաւ	57
40 Ըքաշաշ	55	4 Մանկական ակնոց	28
43 Բարտ	58	*23 Մանուկ և օձ	44
26 Բարեսիրտ եղբայրը	45	29 Մեր դասարանը	48
8 Բողկ	29	3 Մեկտեղ և զատ զատ	28
*20 Գառնուկին լացը	42	38 Մուկ	54
19 Գեղացւոյն առևտուուրը	38	8 Ոյժը իրաւունք չէ	37
*7 Գեղացւոյն երազը	29	*30 Ոսկի հաւկիթ	48
14 Գիշեր	35	21 Ուսելիք և ըմպելիք	43
9 Գոյներ	31	47 Պայտ	61
24 Գրատախտակ	45	25 Պիակիտ	45
*46 Գեղձանիկ և աղաւնեակ	60	49 Ջաղացպան և էշ	64
22 Դպրոցի մէջ	43	34 Սեղան և աթոռ	51
2 Եղբայր և քոյր	27	27 Սենեակ	46
28 Երկու տղայք և ընկոյդ	47	1 Տղայ և ծնողք	27
16 Զգեստ	36	13 Տղայ և կննդանիք	33
37 Ընծայ ի սրտե	53	31 Տունը	49
*50 Թաթուլին դալացօլը	66	39 Քաղցրասեր աղջիկը	54

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԽՄՀ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
4225

*) Ասողանիւով դրուածները ուսանաւոր են :



Ամբողջականի և առաջին Շնթերցարանի գիմն
է 30 կուզ. ճանապարհի ծախքով 35 կուզ.

ԽՈՍ ՑԵՍԱԻ

Երկրորդ Շնթերցարան հայերէն լեզուի, Կախ-
իչւանի և Պեսարապիոյ վիճակին հայ դպրոցներուն
համար, յօրինեց Յ. Վալյուտեան. Տիկիս, տպարան
Յ. Մարտիրոսեանի:

Գիմն է 40 կ. ճանապարհի ծախքով 45 կուզ.

Այս երկու Շնթերցարաններէն քառն օրինակ և
աւելի խնդրողները ճանապարհի ծախք չը վճարեն:

Փողը կանխիկ վճարելի:

Օտար քաղաքներէն կողմէն ուղղակի յօրինողին
Հետեւալ հացէով. въ Нахичевань на Дону, въ
Гогоевское училище, учителю Ивану Калустяну.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

2018 3389



